# ՆԱԽԱՆՁԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Կամուրջներ - Մաս 7

Նախանձ: Զայրանալ ուրիշների կյանքում Աստծո բարիքները տեսնելով և անտեսել սեփական կյանքում Աստծո բարիքները:

## <u>Ինչպե՞ս է նախանձը փչացնում մարդկային փոխհարաբերությունները:</u>

- Առաջ է բերում բախումներ

*«... Նախանձում եք, բայց չեք կարող ձեռք բերել. և ահա <u>կռվում եք ու պայքարում</u>:»* Հակոբոս 4:2

- Խափանում է ուրախություն

*«Մարմնին կյանք է մի հանդարտ սիրտը, բայց նախանձը փտություն ոսկորներին:»* Առակած 14:30

- Առաջնորդում է այլ մեղքերը

*«Որովհետև ուր որ նախանձ և հակառակասիրություն կա, այնտեղ կա նաև անկարգություն և <u>ամեն տեսակ չարիք</u>:»* Հակոբոս 3:16

*«Մի ժամանակ մենք էլ էինք <u>անմիտ</u>... ապրում էինք չարությամբ ու <u>նախանձով</u>.»* Տիտոս 3:3

## <u>Բուժում նախանձ սրտի համար</u>

- Նախանձի բուժման սկզբնակետը այն ընդունելն է:

*«Իսկ եթե ձեր սրտերում <u>դառն նախանձ</u> և հակառակասի-րություն կա, մի՛ պարծեցեք և <u>ճշմարտության դեմ մի՛ մեղանչեք</u>:»* Հակոբոս 3:14

1. Ընդունել իմ յուրահատկությունը

*«Դու ստեղծեցիր իմ երիկամունքները, և ծածկեցիր ինձ իմ մոր որովայնումը... Քո աչքերը տեսան իմ կերպարանքը՝ դեռ անպատրաստ. և քո գրքումը գրված էին այն բոլոր օրերը որ լինելու էին՝ երբոր նրանցից մեկը դեռ չկար:»* Սաղմոս 139:13,16

2. Մերժեմ ուրիշների հետ համեմատվելը

*«Թող ամեն մեկն իր գործը կշռի և իր գոհունակությունը միայն իրեն պահի, փոխանակ ինքն իրեն ուրիշների հետ համեմատելու:»* Գաղատացիս 6:4

3. Ուրախանամ ունեցածովս

*«Ամեն բանի համար շնորհակալ եղեք...»* Ա Թեսաղ 5:18

*«Լավ է աչքով տեսնել քան թե մտքով զբաղվել.»* Ժող 6:9

*«Ուրախացողների հետ ուրախացե՛ք, իսկ լացողների հետ լա՛ց եղեք:»* Հռոմեացիներին 12:15

*«Սեր ունեցողը չի նախանձում.»* Ա Կորնթացիս 13:4

4. Հանգիստ գտնեմ Աստծո գերիշխանության մեջ

*«Մի նախանձիր անօրենություն գործողներին: Որովհետև նրանք խոտի պես շուտով կ'կտրվին... Տիրոջը յուսա և բարի արա.»* Սաղմոս 37:1-3

5. Կենտրոնանամ Աստծո՝ իմ համար ունեցած ծրագրի վրա

*«Ետ դարձրու իմ աչքերը որ ունայն բան չ'տեսնեն.»* Սաղմոս 119:37

*«Թող սիրտդ չնախանձի մեղավորներին. այլ Տիրոջ վախի մեջ եղիր ամեն օր:»* Առակած 23:17

Հաջորդ Քարոզի Թեման

ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ ԲԱՆԱԼԻՆ

Հովիվ Սարո Խաչիկեան